

ԱՐՏԱՇԱՏԻ ԺՈՂՈՎՔԸ ԵՒ ԱՆՈՐ ՄԱՍՆԱԿՅՈՂ

ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԸ

Վարդանանց պատերազմի մեծ դէպքին մէջ ամէնէն նշանակալից եւ մեծղի դործը նկատելու է Արտաշատի ժողովքը, ուր մեր հայ նախարարները եւ բարձրաստիճան եկեղեցականները միացան վճռական ու անվարան պատասխանը տալու Յաղկերտի նամակին, որ զերեւեք կը հրաւիրէր քրիստոնէական հաւատքը ուրանալ եւ պարսիկ զրադաշտական կրօնքը ընդունիլ:

Եղիշէ եւ Ղ. Փարպեցի խօսելով այս ժողովքին շուրջ համաձայն են իրարու ընդհանուր դիտերու մէջ միայն: Այսպէս երկու հեղինակներն ալ կը պատմեն թէ երբ Յաղկերտի նամակը հասաւ Հայաստան, նախարարներու որոշումով եւ հաւանութեամբ մէկ տեղ հաւաքուեցաւ հայ եկեղեցւոյ նուիրապետութիւնը, եպիսկոպոսներ, քորեպիսկոպոսներ, երէցներ ու վարդապետներ, եւ նստած հայ նախարարներու հետ՝ միաձայն մերժեցին Յաղկերտի

առաջարկը¹: Սակայն կան մանրամասնութիւններ, ուր մեր երկու հեղինակները կը դատուին իրարմէ, եւ տարբեր պարագաներ կը մատնան իրենց: Ասկից բնական հարց կը ծագի թէ ո՞վ անոնցմէ ստոյգը կամ ճշմարտը պատմած է: Հարց մը որ աւելի քան կէս դարէ ի վեր բանասէրներ ու պատմաագետներ կը յուշեն ու կը քննեն, միշտ Փարպեցիի ընծայելով առաւելութիւնը:

Վերջին բանասէրներէն Մեծ. Հ. Ն. Ա. կինեան իր ընդարձակ քննադատական ուսումնասիրութեան մէջ² այս հարցն է որ կ'ուզէ լուծել. եւ բնականաբար կ'անդրադառնայ մեր խնդրին շուրջ ալ եւ հոս ալ իր յեղաշրջական վարկածը³ փաստել կը փորձէ:

Մենք նպատակ չունինք հոս Հ. Ա. կինեանի ամբողջ դործը քննադատելու⁴. սակայն ներկայ խնդիրը լուսաբանելու միջոց

մանակակից եւ ակնատեսէ մը, (ներկայիս այս դադափարը փոխած է, այժմ ինքն ալ կը ստիպուի Եղիշէի ակնատեսի ինքնավայելութիւնը հետադարձ լուսաբանել): Սակայն ինչերորեք դարուն յունաստեայ Ասորի մը չարափոխեց Եղիշէի դրութիւնը եւ 572-ի պատմութիւնը փոխանցեց 451-ի Վարդանանց պատմութեան: Փոխանցումը տեղի ունեցաւ Փարպեցիի պատմութեան երկրորդ դրութեան հետեւողութեամբ: Ասոր համար Եղիշէի ներկայ դործին մէջ յայտնի կը տեսնուի Փարպեցիի դործին հետեւողութիւն, բայց կոյն նաեւ ակնհայտ տարբերակներ, արդիւնք նախկին սկզբնաղբին, զոր, բանասէր Հայրը, կը համարել երեւան հանած ըլլալ:

Հ. Ա. կինեանի յեղաշրջական վարկածը շատ ազդեց հրապարակը, բայց չունեցաւ մինչեւ այսօր իր հետեւողը: Ընդհակառակն շատեր քննադատե-

¹ Եղիշէ, «Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին», Վենետիկ, Ս. Ղազար, 1893, էջ 49-50: Ղ. Փարպեցի, «Պատմութիւն Հայոց», Վենետիկ, Ս. Ղազար, 1893, էջ 124-126:

² Հ. Ն. Ա. կինեան, «Եղիշէ վարդապետ եւ իւր Պատմութիւն Հայոց պատերազմին», Վենետիկ, 1932. 1936. Հանդ. Ամս. 1937. 1950:

³ Հ. Ն. Ա. կինեան իր ընդարձակ ուսումնասիրութեան մէջ ուզեց Եղիշէի անձին եւ դործին բոլորովն նոր կերպարանք տալ. ան անբաւական զբաղմունքներէ փորձերը Եղիշէի Փարպեցիէն վերջ հետեւ Եղիշէ ալ ունէր Փարպեցիէն անկախ եւ տարբեր մանրամասնութիւններ: Իր վարկածին համաձայն Եղիշէի ներկայ դրութիւնը եղծումն է սկզբնաղբի մը, որ կը պատմէր 572-ի Դուինի ապստամբութեան դէպքը. ան դրուած ըլլալու էր ժա-

ղլխաւորաբար իր փաստերուն դէմ է որ պիտի մաքառինք⁵, որպէսզի երեւան հանենք թէ մեր երկու պատմիչներէն ո՞վ անկի տեղեակ էր Արտաշատի ժողովքի պատմութեան եւ ո՞վ լաւագոյն տեղեկութիւնները մեզի հաղորդած:

Ամփոփելով մեր ուսումնասիրութեան նիւթը պիտի խօսինք նախ ժողովքի դուրմարման տեղւոյն վրայ: Երկրորդ՝ ժողովական եպիսկոպոսներու անձեւունքն եւ թիւին վրայ. երրորդ՝ անոնց պատուոյ աւելին եւ կարգին. հոսակ պիտի անդրադառնանք ժողովքի զլխաւորին, Յովսէփ Կաթողիկոսին վրայ:

ԺՈՂՈՎՔԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՎԱՅՐԸ

Մինչ Ղ. Փարպեցի կը լռէ ժողովքի դուրմարման տեղւոյ անունը, եւ կը դոճաւայ ընդհանուր եւ անորոշ ձեւով տեղեկացնելով մեզ թէ «Ժողովեցան այնուհետեւ ըստ հրամանի տանուտերացն Հայոց տեւրե եպիսկոպոսները ըստ դաւառաց աշուրհին Հայոց»⁶, Եղիշէ կը ճշդէ տեղը խարհին Հայոց⁶, Եղիշէ կը ճշդէ տեղը լսելով. «Միահամուռ ժողովեալք ի թաւաւորանիստ տեղին յԱրտաշատ»⁷:

Այս պարագան ինքնին կասկածելի դարձուցած է Եղիշէի վաւերականութիւնը Հ. Ա. կինեանի աչքին. վասնզի քննադատ Հայրը՝ նախ կը դարձանայ թէ ի՞նչպէս Եղիշէ իրտէ ժողովքի դուրմարման վայրը մինչ

Փարպեցի կը լռէ դայն⁸. յետոյ իր վարկածին հետեւելով կ'ուզէ ենթադրել թէ 571-ի դէպքերուն ալ ժողովք մը եղած լիտի ըլլար Արտաշատի մէջ, եւ չարափոխութիւնը խմբագրելը դայն Վարդանանց չըջանի ժողովքին անցուցած է: Սակայն տակաւին այդ մասին պատմական ակնարկներ դուրմարման չըլլալով կը խոստանայ «այդ մասին ուրիշ անդամ խօսիլ»⁹, ինչ որ կը կարծենք թէ կատարած է տակաւին: Յետոյ նկատելով թէ Արտաշատ եղած էր Արտաշատեան թագաւորներու մայրաքաղաք, ու եւնի թագաւորներու մայրաքաղաք, ու կործանած Բրիտանոսէ շուրջ դար մը վերջ, անյիշատակ մնացած էր անոր փառքը Ե. դարուն, այնպէս որ, նոյն դարու մեր հեղինակները, Ազաթանգեղոս, բոլ մեր հեղինակները, խօսելով Արտաշատի քաղաքի վրայ չեն յիշած երբեք անոր մայրաքաղաք եղած ըլլալը. ուստի Յարգ. Հայրը կը հարցնէ թէ ի՞նչպէս Յարգ. Հայրը կը հարցնէ թէ ի՞նչպէս կան եղելութիւնը: Եւ հարցը կը լուծէ հոս ալ Եղիշէի խմբագրին վերագրելով յաւելումը. ան Մ. Խորենացիի ազդեցութեան լուծումը. դարուն աւելցուցած է, կ'ըսէ, տակ թ. դարուն աւելցուցած է, կ'ըսէ, «Արտաշատ» անունին հետ նաեւ «թագաւորանիստ տեղին»¹⁰:

Որքան ալ այս պատճառաբանութիւնը կազմէ կ'երեւայ մեզի, վասնզի կը կարծենք թէ աւելի ղեւերին էր որ Ե. դարու հեղինակ մը տեղեակ ըլլար Արտաշատի թա-

⁵ Հ. Ա. կինեան Արտաշատի ժողովքի մասին կը խօսի իր յիշեալ դործին Բ. հատորին մէջ, էջ 613-627:

⁶ Ղ. Փարպեցի, Անդ, էջ 124:

⁷ Եղիշէ, Անդ, էջ 50:

⁸ Քննադատներու շատերու համաձայն Եղիշէ Փարպեցիէն կախում ունի. ուստի անոնք կը դարձան անշուշտ թէ ի՞նչպէս Եղիշէ ունի Փարպեցիէն աւելի տեղեկութիւններ:


⁹ Հ. Ա. կինեան, Անդ, Հտ. Բ. էջ 614:

¹⁰ Հ. Ա. կինեան, Անդ, Հտ. Բ. էջ 6, 615-616:

ներկայացնեն պատմական դեմքեր, որոնք մեծ մասով ծանօթ են մեզի ուրիշ վաւերացողներէ. իսկ քանի մը հատը բոլորովին անծանօթ կը մնան: Ինչ որ նշան է թէ խմբագիրը քաղած է զանոնք մեզի ծանօթ աղբիւրներէ, Կորին կամ Եղիշէ, այլ դուրս հանած ժողովրդին տեղեակ աղբիւրէ մը: Ապա թէ ոչ պէտք է ենթադրել թէ խմբագիրը իր կողմէ յերկարած է այդ անունները. բայց ճրի ենթադրութիւն մը ճրի ալ կարելի է մերժել:

Երկրորդ, Շահապիվանի մասնակցող երէցները, ինչպէս տեսանք, իբր եպիսկոպոս ներկայ գտնուած են Արտաշատի ժողովրդին մէջ: Պարագայ մը որ նոյնպէս ցոյց կու տայ՝ թէ մեր այս վաւերացողը իր այս տեղեկութիւնը Եղիշէ դուրս ուրիշ տեղեակ աղբիւրէ մը քաղած է: Ապա թէ ոչ դարձեալ ենթադրելու է որ կանոններու խմբագիրը Եղիշէ քաղելով եպիսկոպոսներու անուններ, անոնցմէ մաս մը իբր եպիսկոպոս նստեցուցած է Շահապիվանի ժողովին մէջ, ուրիշներ իբր երէց, ասոնց վրայ աւելցուցած է իր կողմէն անուններ

(Շարունակելի)



ալ եւ այսպէս ճոխացուցած նախաբանը, ինչպէս պիտի ուղէր ենթադրել Հ. Ալիւեան: Բայց մենք այս ենթադրութիւնը ճրի կը գտնենք, ուստի եւ կը մերժենք:

Կարելի է ընդունիլ թէ վաւերացողը թերու մէջ աղաւաղումի միջոցով նոր անուններ ստեղծուին, որոնք միշտ անծանօթ պիտի մնան: Բայց մենք տեսանք թէ ինչպէս աղաւաղ անուն մը թողած է հետքեր տարբեր ձեռագիրներու մէջ եւ յաջորդեցանք երեւան հանել անուն մը «Եւղաղ եպիսկոպոսը» որ ծանօթ էր մեզի Եղիշէին: Այսու մենք երկու շահ ունեցանք. լուսաբանուեցաւ Եղիշէի մէջ խնդրական մնացած Եւղաղ եպիսկոպոսի անձը, քանի որ զինքը գտանք Շահապիվանի ժողովրդին մէջ ալ. եւ ունեցանք հաստատութիւնը թէ Շահապիվանի ժողովրդին կանոններու նախաբանը յերկարածոյ անուններով չէ ճոխացած, այլ պատմական դեմքեր ներկայացընող անուններով:

Հ. Պ. ՀԱՄԵԼԵԱՆ

Ա Ի Ա Ր Ա Յ Ր Ի Ճ Ա Կ Ա Տ Ա Մ Ա Ր Տ Ը

(Եղիշէ, ԳԼՈՒ Զ.)

ՀԱՅՈՑ ԵՐԿՐՈՐԴ ԴԻՄԱԴՐՈՒԹԻՒՆԸ
ԵՒ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՊԱՐՄԻԿ ԹԱԳԱՌՈՐԻՆ ԴԵՄ

ՆԻՒՍԱԼԱՌՈՐՏԻ ՀՆԱՐԲՆԵՐԸ

Այնուհետեւ պարսիկ բանակի զօրավարը նկատելով որ այլեւս պատգամաւոր չէր մնացած՝ հայերը խաբելու, և ոչ ալ յոյս ու ակնկալութիւն՝ զանոնք իրենց անքակտելի համաձայնութենէն խախտելու, իր մօտ կանչեց անօրէն վասակը և անոր հետեւորդ հայ աշխարհի բոլոր ուրացող իշխանները. հարցաքննեց զանոնք և ուսումնասիրեց յաղթելու հնարագիւտ միջոցները: Երբ տեղեկացաւ ամէն մէկ իշխանի քաջագործութիւններէն շատերը չեց իր հպատակ զօրավարներն ալ իր և հրամայեց փրկելու երամակներն իւր մօտէն բերել. գազանները զանազան խումբերու բաժնեց և իւրաքանչիւր փրկի մօտէն հազար սպանազէն զետեղեց. Հնաշուենք մնացած զօրքը:

ԲՈՏԱՌՈՐԻՆ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ

Թագաւորին հրամանով խօսեցաւ նաեւ բարձրաստիճաններուն հետ և ըսաւ. «Իւրաքանչիւր մարդ թող յիշէ մեծ արքային պատուէրը և նպատակ ունենայ՝ մեծ անուն շահիւ: Գերադաս կեանքը: Մի մոռ մահը՝ քան վատանուն կեանքը: Մի մոռ նաք այն իւղը, պսակը, ոստերն ու առատաձեռն նուէրները՝ զոր արքունիքէն պիտի ստանաք: Ամէնքնիդ ալ գաւառներու տէր էք և ամբաւ իշխանութիւն ունիք: Դուք լաւ կը ճանչնաք Հայաստանի զօրութիւնը և հայոց ամէն մէկուն անվեհեր քաջասրտութիւնը. եթէ յաղթուիք՝ թերեւ

ողջ-ողջ զրկուիք այն մեծ հարստութենէն զոր ունիք: Յիշեցէք մանաւանդ ձեր սիրելի լակները, յիշեցէք մանաւանդ ձեր սիրելի բարեկամները. գուցէ արտաքին թշնամիէն ընկճուիք, և ներքին սիրելիներու ողբակից դառնաք»:

Հուսկ յիշատակեց նաեւ իրենց բազմաթիւ դասակը ընկերները, որոնք թէեւ պատերազմէն ազատած էին, սակայն մահապատիժ ստանալով՝ սուրի տակ էին գացել. անոնց տղաքն ու աղջիկները ամբողջ ընտանիքով զրկուել էին տուն ու տեղէ, և հայրենաժառանգ երկիրները զրաւուել:

ՊԱՐՄԻԿԱՆ ԲԱՏԱԿԸ

Այսպէս խօսեցաւ և արքունական հրամանը շատ ալ աւելի սաստկապիւն ներկայացուց: Ապա կազմակերպեց ու զաւարեց բոլոր բանակը, և ռազմաճակատը երկարեց տարածեց մեծ դաշտի երկայնքին: Իւրաքանչիւր զազանի աջ ու ձախ կողմերը երեքական հազար սպանազէն զրաւ, իսկ ամէնէն ընտիր զինուորները իր շուրջը խմբեց. ու այսպէս, հզօր աշտարակի կամ անմատոյց բերդի նման որոշեց, զբոշակներ պարզեց և հրամայեց պատրաստ գտնուիլ մեծ փողի ազդանշանին:

Իսկ Ապարհացի գունդը, ինչպէս նաեւ կատիշներու, Հոններու և Գեղերու զօրքերը և ուրիշ անթիւ քաջները պատերազմիկ-